«Միության» կապերն Ադրբեջանի հետ **26.3.2021**

«ՄԵԶ ՊԵՏՔ Է ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ»

«Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության» (ԳՍԴԿ, գերմ.՝ Sozialdemokratische Partei Deutschlands) պատգամավոր Ֆրանկ Շվաբեն պայքարում է Ադրբեջանի ատկատների դեմ: Նա լուրջ մեղադրանքներ է հնչեցնում «Միություն» խմբակցության ղեկավարի հասցեին:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ). լուսանկար՝Mustafa Yalcin/Anadolu Agency/ gettyimages

Հարցազրույցում՝

Ֆրանկ Շվաբե

Բունդեսթագի ԳՍԴԿ-ի 50-ամյա պատգամավորը ծագումով Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիայից է և խմբակցության՝ մարդու իրավունքների և հումանիտար օգնության խոսնակն է: Նա ԵԽԽՎ-ի անդամ է:

taz. -Պարո՛ն Շվաբե, մենք ցանկանում ենք խոսել «խավիարային դիվանագիտության» մասին: Վատ չի հնչում, բայց սա սոսկ մեկ ուրիշ եզրույթ է կոռուպցիայի որոշակի տեսակի համար: Ինչպե՞ս առնչվեցիք դրա հետ:

Ֆրանկ Շվաբե. Ես ԵԽԽՎ-ի անդամ եմ: Այն պարտավոր է իր անդամ պետություններում հսկել մարդու իրավունքների պահպանմանը: Դա վերաբերվում է նաև Թուրքիայի, Ռուսաստանի և Ադրբեջանի պես երկրներին: 2013 թ. այդ գործում ես դեռ բոլորովին անփորձ էի: Եվ տեղի ունեցավ հենց այդ Ադրբեջանում քաղբանտարկյալների ազատ արձակման մասին զեկույցի քվեարկություն: Երկարատև պայքարից հետո՝ այն մերժվեց՝ ձայների (պարզ) զգալի մեծամասնությամբ:

Դա զավեշտալի էր, քանի որ բոլորին պարզ պետք է լիներ, որ Ադրբեջանում կան քաղբանտարկյալներ: Քվեարկությունից հետո Խորհրդարանական վեհաժողովի

միջանցքներում բանը հասավ ցնծության անհեթեթ տեսարանների: Դա ինձ վրդովեց: Իսկ ես չէի կարող ճշտիվ կարգի դնել այն, ինչ տեղի էր ունենում այդտեղ, բայց երդվեցի պայքարել:

-Եվ ի՞նչ էր տեղի ունենում այդտեղ:

Պատգամավորների ցանց կար: Նրանք միանգամայն ակնհայտ պայմանավորվում էին բաներ, որոնք ԵԽ-ի ոգով չէին: Չէ՞ որ այն պետք է պաշտպանի մարդու իրավունքները, օրենքի գերակայությունն ու ժողովրդավարությունը: Բայց շատ պատգամավորների համար խոսքը վերաբերում էր ճիշտ հակառակին: Շատերն ուղղակի փորձում էին պետություններին պաշտպանել քննադատությունից՝ նրանց քննադատելու փոխարեն: Ակնհայտ է, որ հաճախ փողի դիմաց: Այդ ցանցի դեպքում խոսքը միայն Ադրբեջանին չի վերաբերվում, սակայն այն կենտրոնացված է այնտեղ:

-Ինչո՞ւ:

ԵԽ-ում Ադրբեջանը, առանձնապես, հաճախ է քննադատվում, քանի որ այնտեղ մարդու իրավունքների վիճակը սոսկալի վատ է: Միևնույն ժամանակ, շատ տարիներ առաջ Ադրբեջանը որոշել է սեփական անունն ուղղել՝ շատ փողով: Եվ նախագահ Իլհամ Ալիևը շա՛տ, շա՛տ-շա՛տ փող ունի:

-Ի՞նչ է դա նշանակում:

Ադրբեջանը հարյուրավոր միլիոններ, եթե ոչ միլիարդներ է դնում իր միջազգային հեղինակությունը բարելավելու համար: Խոսքը, միաժամանակ, վերաբերվում է նաև ֆուտբոլին, Եվրատեսիլ երգի մրցույթին և Ֆորմուլա 1 մրցավազքին: ԵԽ-ն գլուխկոտրուկի սոսկ մի հատիկն է: Եվ գերմանացի պատգամավորներն իրենց հերթին ԵԽ-ի մի մասն են միայն:

-Ի՞նչ դեր են խաղում գերմանացի այդ պատգամավորները:

Որքան հայտնի է, խոսքը, ըստ էության, Բունդեսթագի «Քրիստոնեա-դեմոկրատական միություն» (ՔԴՄ, գերմ.՝ Christlich Demokratische Union)/«Քրիստոնեական-սոցիալական միություն» (ՔՍՄ, գերմ.՝Cristlich-Soziale Union) խմբակցության նախկին և գործուն երեք անդամների մասին է: Առանցքում Դաշնության Ներքին գործերի նախարարության նախկին պետքարտուղար և Բունդեսթագի ՔԴՄ պատգամավոր Էդուարդ Լինտներն է: Ըստ լուրերի՝ կազմակերպությունների և առևտրական տների միջոցով ամբողջ Եվրոպայում տարբեր քաղաքական գործիչների Լինտներն ապահովել է Ադրբեջանի փողով՝ ի թիվս այլ բաների՝ հրահանգավորված և բարեմիտ ընտրադիտարկման համար:

Մյունխենի գլխավոր դատախազությունը հետաքննություն է վարում Լինտների, Բունդեսթագի ՔԴՄ պատգամավոր Ակսել Ֆիշերի դեմ: Ու հետաքննություն է ընթացել նաև Բունդեսթագի ՔԴՄ պատգամավոր Կարին Շթրենցի դեմ՝ մինչ մի քանի օր առաջ նրա հանկարծակի և ողբերգական մահը: Ասում են՝ 2008-2016 թթ. բրիտանական փոստարկղային ընկերությունների միջոցով, բալթյան հաշիվներով Լինտները ստացել է շուրջ չորս միլիոն եվրո: Դրանից առնվազն 22.000 եվրո ուղղվեց տիկին Շթրենցին: Դա ապացուցված է: Ի պատասխան՝ սպասվում էր Ադրբեջանի օժանդակությունը: 2015 թ. ես Կարին Շթրենցի հետ Ադրբեջանում էի՝ ընտրադիտարկման նպատակով:

-Ի՞նչ է տեղի ունեցել այնտեղ:

Վերջում պատվիրակությունը պարզ մեծամասնությամբ հաստատեց, որ, իբր թե, մեծ առաջընթաց կա դեպի ազատ և արդար ընտրություններ: Դա անհեթե՛թ էր, այնտեղ ընտրությունները միմիայն ֆարս էին և են: Կարին Շթրենցը համաձայնվեց մեծամասնության հետ: Եվ նախապես նա կեղծ պարզաբանում տվեց, որ իր մոտ շահերի բախում չկա: Ընդ որում, նա արդեն Լինտների միջոցով գումար էր ստացել Ադրբեջանից:

-Ըստ ձեր գիտության՝ի՞նչ դեր է խաղում ՔԴՄ պատգամավոր Ակսել Ֆիշերը, որի անձեռնմխելիությունը վերջերս Բունդեսթագը վերացրել է:

Այն ժամանակ Ակսել Ֆիշերը սոսկ գերմանական պատվիրակության ղեկավարը չէր ԵԽ-ում: Նա դարձավ նաև «Եվրոպայի ժողովրդական կուսակցություն» (ԵԺԿ, գերմ.՝ Die Europäische Volkspartei (Christdemokraten)) խմբակցության նախագահ Խորհրդարանական վեհաժողովում՝ցանցի աջակցությամբ: Նա Լուկա Վոլոնտեի հետնորդի իրավահաջորդն էր: Ասում են՝ Վոլոնտեն գանձել է մոտ 2.4 միլիոն եվրո: Այս ընթացքում Իտալիայում առաջին ատյանի դատարանի կողմից Վոլոնտեն դատապարտվել է չորս տարվա ազատազրկման՝ կոռուպցիայի պատճառով: Մինչ այժմ նա միակն է: Եվ ինչն է ինձ վրդովում. չնայած բոլոր մեղադրանքներին՝ Ֆիշերը դեռ Բունդեսթագի «Միություն» խմբակցության անդամ է: Դրա համար պատասխանատվություն է կրում խորհրդարանական կառավարիչ Միխայել Գրոսե-Բրոմերը:

-Ուղղակի նա ստիպված էր առնվազն հրաժարվել վերստուգիչ հանձնաժողովի նախագահությունից: Խմբակցության ղեկավարը պատճառաբանում է անմեղության կանխավարկածով, որն առայժմ միայն պարզվում է:

Ենթադրյալ անմեղն ինչո՞ւ պետք է հրաժարվի իր հանձնաժողովի նախագահությունից: Նաև «Միություն»-ը շատ արագ հետևություններ է արել դիմակի գործից: Այնպես որ, անմեղության կանխավարկածը չի գործում: Բնականաբար, դիմակի գործը վատն է, բայց մյուս կողմից՝ մարդիկ նստած են բանտերում և հույս ունեն, որ ԵԽ-ն օգնության կգա իրենց: Իսկ այս մարդիկ անում են հակառակը և դրա համար «կեղտոտվում»: Դա վատթարագույնն է, որ պատգամավորները կարող են հասցնել գերմանական պառլամենտարիզմին:

-Բունդեսթագը կարգապահական տույժ էր սահմանել տիկին Շթրենցի նկատմամբ ...

Այո, դա հնարավոր ամենաբարձրն է, բայց ոչ կոռուպցիայի համար, այլ որովհետև նա հայտարարություն չի տվել իր կողմնակի եկամտների մասին: Այս հարթությունում սանկցիայի այլ հնարավորություն չկար: Ես նախատում եմ «Միություն» խմբակցության ղեկավարությանը, որովհետև այն կա՛մ խայտառակության չափը չի հասկացել, կա՛մ չի ցանկանում պարզել: Երբ այդպիսի դեպքեր են երևան գալիս, բարոյական սկզբունքները պետք է կրկին վերականգնվեն: Եվ հիմա «Միություն»-ը հորինել է այդ անհեթեթ պատվո հռչակագրը և ոչ մի անգամ դրանով չի մորթազերծել Ադրբեջանին...

- Առնվազն երկու ուրիշ դեպքեր էլ կան, որոնք այս կապակցությամբ պետք է նշվեն՝ մինչև այժմ Բունդեսթագի ՔՍՄ կամ ՔԴՄ պատգամավորներ Թոբիաս Ցեխ և Մարկ Հաուպտման, որոնք հրաժարվել են իրենց մանդատից անցած շաբաթների ընթացքում:

Դեպքերը տարբեր են: Այո, Ցեխը նաև ԵԽԽՎ-ի անդամ էր և, ասում են, որ ստացել է հնգանիշ հոնորար իբր թե Մակեդոնիայի այն ժամանակվա վարչապետ Նիկոլա Գրուևսկիի կուսակցությանը խորհուրդատվության համար: Միաժամանակ, Գրուևսկիի նախընտրական արշավում Ցեխը, որպես քաղաքական գործիչ, բեմում էր...

-Այդ ընթացքում կոռուպցիայի պատճառով նա դատապարտվել է և փախել Հունգարիա:

Այո, պարոն Ցեխը, սկզբունքորեն, կարող է խորհուրդ տալ՝ ում ուզում է, բայց ակնհայտ է՝ նա երբեք պայմանագիր չէր ստանա, եթե պատգամավոր չլիներ:

-Ինչպե՞ս է այդտեղ «տեղավորվում» թյուրինգցի Մարկ Հաուպտմանը, որի գրասենյակները հինգշաբթի խուզարկվել են:

Ընդհանրապես: ԵԽ-ից այն կողմ կա մեկ այլ «կապ» (“Connection“): Այն դուրս է գալիս անմիջապես Բաքվից, և դրա մասն են Ադրբեջանի դեսպանությունը և նավթի ու գազի «Սոկար» առևտրային ընկերությունը. պետական ձեռնարկություն, որն իր մասնաճյուղն ունի Մայնի Ֆրանկֆուրտում և հովանավորում է շատերին: Եվ հետո, դեռ կա Օտտո Հաուզերը՝ որպես ծայրագույն մեծություն, նաև՝ ՔԴՄ քաղաքական գործիչ և Ադրբեջանի պատվավոր հյուպատոս՝ Շտուտգարտ նստավայրով: Դա գերմանական երկաթուղին է, որի միջոցով հոսել են նաև լոբբիի փողերը՝ ՔԴՄ նախկին պատգամավոր Նիկոլաս Լյոբելի մոտ...

-... ով վերջերս կորցրեց մանդատը դիմակների գործի պատճառով...

…2012 թ. Լյոբելի մոտ Ադրբեջանից հովանավորվում էր Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասի խորհրդարանի «Երիտասարդների խումբ»-ը (Junge Union): Հաուպտմանն իր հերթին գովազդներ ստացավ մի տեսակ սեփական՝ տեղական թերթի համար…

-Մեղադրանքներ կան նաև Բունդեսթագի ԳՄԴԿ պատգամավոր Մարկուս Հելդի դեմ՝ «Սոկար»-ի նվիրատվության պատճառով, ու նաև հետաքննություն է վարվում նրա դեմ:

Բայց, հավանաբար, ոչ նվիրատվության պատճառով: Որքան գիտեմ, նա «Սոկար»-ի նվիրատվությունը փոխանցել է իր ծննդավայրի մարզական ակումբին: Նա անձամբ փողը չի վերցրել: Այն, ինչի մասին կարելի է հարցնել, հետևյալն է՝ ինչպե՞ս գլուխ եկավ կապը «Սոկար»-ի հետ:

-Ինչո՞ւ նրան այդ չհարցրիք: Ինչ էլ լինի, դուք նույն խմբակցությունից եք:

Իմ թեման ԵԽ-ն է: Ավելի ընդհանուր՝ ես Բունդեսթագի գլխավոր հետախույզը չեմ: Բայց մեզ, անկասկած, մեկը պետք է:

- Կանխման համար ի՞նչ պետք է անի Բունդեսթագը:

Մեզ պետք է թափանցիկություն, թափանցիկություն, թափանցիկություն: Բնականաբար, լոբիի ցուցակն ինքնաբերաբար չէր օգնի, բայց այն առնվազն ավելի է դժվարացնում հնարավորինս մեծ թափանցիկությունը: Տիկին Շթրենցը, օրինակ, այո, միայն աչքի զարնեց, քանի որ ստիպված էր Բունդեսթագին տեղեկություն տալ, որ ինքը ֆիրմա է հիմնել:Եվ հետո մեկը նկատեց, որ այս ֆիրման փող է ստանում Լինտներից: Իսկ հետո մեկը և մեկը գումարվեցին: Մեզ լրացուցիչ այլ հարաբերություն է պետք նաև խորհրդարանի ազգային խմբերի հետ:

-Նկատի ունե՞ք գերմանա-հարավկովկասյանի պես խորհրդարանական խմբին, որն իրավասու է Ադրբեջանի համար:

Այնտեղ նստած են քաղաքական գործիչներ՝ հաճախ առանց արտաքին քաղաքական փորձի, որոնք անսպասելի դիպչում են ավտոկրատական վարչակարգին՝ փորձելով փայլեցնել իրենց իմիջը: Նաև առաջարկների միջոցով, որոնք առնվազն, խիստ կասկածելի են: Այս խմբերը կարող են կապող կետեր լինել օտարերկրյա կոռուպցիոն առաջարկների համար: Դա չի կարող այդպես մնալ:

Սպասու՞մ եք, որ է՛լ ավելի շատ դեպքեր հայտնի կդառնան:

Համոզված եմ, որ շատ դեպքեր կան: Եվ բոլոր ծանոթների դեպքում, անշուշտ, շատ կապակցություններ կան: Դեռ ինչքան երևան կգան, կախված կլինի դրանից, թե ինչքան համառ կշարունակվի հետազոտությունը:

Հարցազրույցը վարեց՝

Սաբինե ամ Օռդե

Սկզբնաղբյուր՝ https://taz.de/Aserbaidschan-Verbindungen-der-Union/!5757324/